ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2018 թվականի N 360-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 202 և 2018 թվականի հոկտեմբերի 24-ի N 205 հրամանները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-32) անհատական կազմում Գագիկ Մարկոսյանի և Շուշանիկ Համբարձումյանի փոխարեն համապատասխանաբար ընդգրկել Էլմիրա Բաղդասարյանին և Ելենա Պապիկյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում

ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման N 5 հավելվածում «Գագիկ Մարկոսյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն, հանձնաժողովի նախագահ» և «Շուշանիկ Համբարձումյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործավարուհի, հանձնաժողովի քարտուղար» բառերը փոխարինել համապատասխանաբար «Էլմիրա Բաղդասարյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալի պարտականությունները կատարող, հանձնաժողովի նախագահ» և «Ելենա Պապիկյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության ավագ բուժքույր, հանձնաժողովի քարտուղար» բառերով:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է